ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Սվետա Հարոսյան, բյուջետային գործընթացի համակարգման վարչության բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2024 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

ՌԴ ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել Մոսկվայում կազմակերպվող «Մասնակցային բյուջետավորում՝ զարգացում միասին» կլոր-սեղան ձևաչափով քննարկմանը և Մոսկովյան ֆինանսական համաժողովին մասնակցություն, որը իրականացվում էր տարբեր երկրներում ֆինանսական որորտի փորձագետների և պետական մարմինների ներկայացուցիչների մակարդակով:

5. Քննարկված թեմաները.

- Քաղաքացիների մասնակցությունը բյուջետային որոշումներում որպես պետության և տեղական ինքնակառավարման մեջ քաղաքացու ներգրավման միջոց
- Ուզբեկստանի Հանրապետության փորձը նախաձեռնողական բյուջետավորման և բյուջեի թափանցիկության ապահովման հարցում
- Քաղաքացիների ներգրավման պրակտիկան պետության և մունիցիպալ կառավարման մեջ Ղրղզստանի Հանրապետությունում
- Մասնակցային բյուջետավորումը Հայաստանում՝ պետական աջակցություն համայնքներին սուբվենցիաների միջոցով
- Մասնակցային բյուջետավորման դերը տարածքային հասարակական ինքնակառավարման զարգացման մեջ
- Նախաձեռնողական բյուջետավորման լսարանի ընդլայնումը Կուսբասում

- Պանելային քննարկում՝ Ինստիտուցիոնալ հիմքերը նախաձեռնող բյուջետավորման զարգացման
- Նախաձեռնողական բյուջետավորման էֆեկտները Սախայի Հանրապետությունում
- Երիտասարդների և ուսանողների նախաձեռնող բյուջետավորման ենթակառուցվածքների զարգացման փորձերը
- Դպրոցական նախաձեռնողական բյուջետավորման զարգացումը Խանտի-Մանսիսկ ավտոնոմ շրջանի օրինակով
- Մասնակցային բյուջետավորման գործընթացի ղեկավարների և մասնակիցների ուսուցում
- Բյուջեի թվային ապագան. տեխնոլոգիաներ և արդյունավետություն
- Սուվերեն ֆինանսական համակարգը տրանսֆորմացիայի շրջանում.

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կլոր սեղանի ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են համապատասխան երկրների փորձի վերաբերյալ զեկույցներ, քննարկումներ և մտքերի փոխանակում: Ներկայացվել են շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են կլոր սեղանի մասնակիցների հետ: Միաժամանակ, շնորհանդեսի միջոցով կլոր սեղանի մասնակիցներին ներկայացվել են տարբեր երկրների փորձը ամփոփող նյութերը և քննարկումների արդյունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նախնական պայմանավորվածության համաձայն նախատեսվում է ստեղծել հարթակ փորձի փոխանակման և քննարկումների շարունակականության ապահովման համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Ա. Գրիգ

22.10.2024թ.